

ՄԵԼԿ

Տարեկան դերը 7 րոպե, կէս տարւանը 4 րոպե:

Ինքնակամ դրութիւնն իմաստասրանը, այլ՝ ճատուրանիւնն:

Պատարագադրացիք դիմում են ուղղակի:

Րաբ.առ. Քծմակիս Մառաշ:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2

(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են առանձին կէտով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ՄԻԿՆԱԳՈՒՓՈՇՏ ԵՒ ՄՈՆԳՈՒՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Մշակիչներէս չամարում րն թերցողը կը կարգայ Միզհադ-փաշայի երևելի ծառք որ այդ երևելի սահմանադրական մարդը խօսեց Փարիզում Փրանսիական պողտիկանների առջև: Այդ ծառք մէջ Միզհադ-փաշան հաւատացնում է որ մահմետականութիւնը նոյնքան կարող է յարմարվել քաղաքակրթութեանը, որքան քրիստոնէութիւնը և յանդգնում է մինչև անգամ հաստատել իր ասածները պատմական փաստերով: Նա իր խօսքը վերջացնում է նորանով որ յայտնում է թէ թիւրքիսն պատրաստ է իր բոլոր քրիստոնէայ հպատակներին եղբայր համարել բայց այն պայմանով որ նոքա այդ քրիստոնէաները, ձեռք վերցնեն իրանց ազգութենից և իրանց տաճիկ համարեն:

Մենք մի անգամ համարձակվեցանք Միզհադ-փաշային ի դիմաց անուանել այժմ չենք փոշմանում և աւելի էլ կասենք: Նա կամ անամօթ խաբեւայ է, որ կամ նում է մոլորեցնել ամբողջ Արաբիա իր դարգահախօսութեամբ, կամ կապելու գիծ է:

Այդ երևելի քաղաքագետ մարդը խօսելով մահմետականութեան կրթողական նշանակութեան վրա, և համեմատելով նրան քրիստոնէութեան հետ, չէ մտածում որ մահմետականութիւնը արդէն այն պատճառով թշնամի է լուսաւորութեան, քաղաքակրթութեան և առաջադիմութեան, որ նա իր բազմակնութեամբ հերքում է ընտանիքը, և ստրկացնում է կրնոջը, նա սպանում է մարդու անհատութիւնը, չբոնելով որ մարդը գլխաւորապէս իր անձի վրա պէտք է իր բոլոր յայտը դնէ,

ձգտէ, աշխատէ, կատարելագործվի և իր չորս կողմ եղածը կատարելագործէ, որովհետեւ մահմետականութիւնը այն վարդապետութիւն է քարոզում որ մարդուց ոչինչ կախված չէ, ամեն բան աներեւոյթ ոյժի ձեռքով նախասահմանված է, ուրեմն ինչ որ պէտք է կատարվի, անպատճառ կատարվելու է: Ուրեմն մարդը ինչքան աշխատէ, կատարելագործվի, — բոլորը զուր աշխատանք է... ամեն բան նախասահմանված է: Այդ անշարժութեան, այդ մեռելութեան վարդապետութիւնը սկզբունքով թշնամի է առաջադիմութեան, լուսաւորութեան: Այդ փառքում (նախասահմանութիւնը) հերքում է ուրեմն աշխատանքը, ինքնաբնութիւնը, ինքնաօրնութիւնը, անձնական ձգտումն, ինքնազորութիւնը, վերջապէս անհատութիւնը: Այդ բոլորն չէ, մահմետականութիւնը այն փաստակար կրօններից է, որոնց մէջ ձեռ սպանել է բովանդակութիւնը, որտեղ ծիսակատարութիւնը գերակշռում է բարոյական սկզբունքների վրա: Մահմետականը եթէ գողանայ, սպանէ (մանաւանդ այլադատան մարդուն), այդ մեղք չէ, իսկ եթէ մի օր նամազ կամ աղօթք չանէ, մի խօսքով մի օր և է ծէս կամ արարողութիւն չը կատարէ, — նա մեծ յանցանք է գործում: Այդ պատճառով և քրիստոնէական դատանութիւնների մէջ այն դատանութիւնները, որոնք ծիսակատարութիւնների, ձեւերի և եկեղեցական սովորութիւնների աւելի նշանակութիւն են տալիս, քան թէ եկեղեցու բարոյական կողմին, այն գորեղ կրթողական նշանակութիւն չունեն, ինչպէս այն դատանութիւնները, որոնց մէջ բարոյական սկզբունքները նախադասվում են ձեւերին: Այսօրեկ մոլեւաւոր սիցիլիացի կամ նապոլեոնացի մի տարւայ մէջ հարիւր մարդ կը սպանէ և իր սրտում իր անձը դարձնայ յանցաւոր չի համարի, բայց եթէ մի անգամ ուրբաթ օրը պատ չի պահի, — իսկոյն կը վազէ քահանայի մօտ որ խօստովանի և արտասուներ աչքերին կապաշխարէ իր մեծ յանցանքը:

Չնայաչառութիւնն է մի կրօնի գլխաւոր կրաւորականացնող, նրան անշարժ և առաջադիմութեանը անընդունակ դարձնող ոյժը: Այդ ի՞նչ էք կարծում, այդ Միզհադ-փաշան չէ ամաչում մերկացնել իր ամբողջ տգիտութիւնը, բերելով իր ծառք մէջ, որպէս իր խօսքերի հաստատութիւն, վայրկեայ պատմական իրողութիւններ: Նա օրինակ է բերում աբաբն երին Սպանիայում: Բայց նա չէ իմանում որ արաբների մէջ արհեստը, գիտութիւնը, փիլիսոփայութիւնը դարգացած էին մահմետականութենից շատ առաջ: Նոյնը և պարսիկների, ասորեցիների և այլ ազգերի մօտ: Ընդհակառակն, երբ որ մահմետականութիւնը մտաւ և արմատացաւ այդ ազգերի մէջ, այդ բոլոր ազգերը սկսեցին հետզհետէ ընկնել թէ բարոյապէս և թէ մշտաւորապէս և վերջապէս հասան իրանց հին փառաւոր անցեալից այն կատարեալ վայրենի, անամաւական դրութեանը, որի մէջ գտնվում են այժմ: Ի՞նչ փառաւոր գիրք էր բռնում Պարսկաստանը մարդկութեան մէջ թէ իր արհեստներով, թէ երկրագործութեամբ, թէ գիտութիւններով, թէ փիլիսոփայութեամբ, և բանաստեղծութեամբ մահմետականութենից առաջ, — և որքան ընկաւ, ստորացաւ նա հետզհետէ երբ ընդունեց մահմետականութիւնը: Այժմ Բաղդադի և Կորդօպայի զայնօրեկ ժամանակ մահմետականութիւնը ծաղկած դրութեան մէջ էր երևում, այդ լոյսը որով նա փայլում էր իր լոյսը չէր, այլ կուտաւ աշխարհից մնացած լոյսի վերջին ճառագայթն էր, որ վերջին անգամ իր կատարեալ դարգացումը ընդունելով, փառաւոր բոցի վերջին կայծի պէս կատարեալ և վերջին գեղեցկութեամբ փայլելուց յետոյ՝ մարեցաւ մահմետականութեան խեղդող, անշունչ ճնշման տակ: Իսկ զարով թուրք իզիտ քաղաքագետ մարդու վերջին պահանջն, — այդ տեսակ յանդգնութիւնը բացատրելու համար մեզ պակասում են խօսքեր: Այդ մարդը

լսել է թէ Ալին մեռել է, բայց չէ իմացել որ Ալին... Նա իմացել է որ Փրանսիացին իրաւունք ունի ասել եղբայրացուն՝ դու պէտք է պատիւ համարես քեզ համար Փրանսիացի անուանվել, նա լսել է որ գերմանական լեհացին հպարտութեամբ կարող է ասել՝ ես գերմանացի եմ, — և կարծում է որ նոյնքան հեշտ է հային, յոյսին, պալմանացուն ստիպել իրան տաճիկ համարել: Այնտեղ մարդը ուրիշ ազգութեան էլ պատկանելով, ակամայէն թարկվում է, խոնարհվում է իրանից բարձր քաղաքակրթութեան առջև, պատրաստ է անգամ ուրանալ իր ազգութիւնը մի գերազանց քաղաքակրթութեանը պատկանող ազգի անդամ կոչվելու պատիւ ունենալու համար, — իսկ այստեղ ընդհակառակն աւելի հին, աւելի բարձր քաղաքակրթութեանը պատկանող ազգերը պէտք է ուրանան իրանց անցեալը և ներկան, ձեռք վերցնեն ապագայից, որպէս զի պատիւ ունենան քաղաքակրթութեամբ աւելի ստոր ցեղի մէջ կանկել, իրանց տաճիկ անուանեն, իրանցից գերազանց համարեն մօնղօլական ցեղի պէս մի տարր, որ չունի ոչ անցեալ, ոչ պատմութիւն, ոչ գրականութիւն, ոչ գիտութիւն, ոչ լուսաւորութիւն...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱ ԱՍՏԻՍԱՆԻՑ

(Պատասխան 20-ին)

Աստիսանի Հայոց Հոգեւոր-Միաբան Վրդարացիների հոգաբարձութիւնը ճանաչելով իր փնտ նշանակութիւնը հայոց երկու սեռի երեխայոց դաստիարակութեան գործի մէջ, երբեք չէ խնայել իր կարողութեան չափ ձեռնառու լինելու համար այդ գործի յառաջադիմութեանը, և ամեն լիջոց գործ է դրել աւելի ընդարձակելու համար իր աշխուրջ հակողութեանը յանձնած մանկանց դաստիարակութիւնը: Նա իր վերահսկողութեան ներքոյ ունի առ այժմ երեք չալոցներ, երկու արական, որոնցից մինը գտնվում է Ս. Աստուածամոր եկեղեցու բակում, երկու՝ զատառուներով, իսկ երկրորդը, որ համարվում է այս առաջինի պատաստակաւոր, գտնվում է Ս. Կատարինէի եկեղեցու բակում, և օրիորդաց դպրոց, որ գետնոված է Ս. Պետրոսի և Պօղոսի եկեղեցու մօտ՝ հանգուցեալ փորվարտեանի՝ կապած դուռնով առած քարեայ երկարահանի տանը: Այս դպրոցը ունի պատրաստական, առաջին և երկրորդ դաստիարակներ:

Կերկայ ուսումնական տարու սկզբից հող բարձութիւնը բացել է արական և օրերորդակ դպրոցներում երրորդ դասարանները Այս երրորդ դասարանների բացելու խնդիրը թէպէտ չվաղուց է, որ դարձել էր հողաբարձութեան միայն սկզբում հողաբարձութիւնը՝ իր անդամների մինչ չնորոգել սխալ ընթացք բռնելու, Անդից լուծումն խնդրելու ժամանակ, յետաձգէր: Հողաբարձութիւնը անցեալ տարի իր նմաների միտում վնաս էր, որ երկրորդ դասարան աւարտող աղայաց և օրերորդաց համար բան մի երրորդ դասատուն, սրտեղ 14—16 տարեկան տղաները և օրերորդներ միասին պարապէին նորա համար հարկաւոր եղած ծխախոլ 600 ռուբլի տեղոյս սրբազան առաջնորդի միջնորդութեամբ խնդրել է Էջմիածնի Սինօզիկ, որ ստանայ այն Ս. Աստուածամօր եկեղեցու արդիւնքից, որ և թոյլ էր տուել Էջմիածնի Սինօզիկացի հողաբարձութիւնը վերջը հասկանալ իր արած սխալը իր մանկավարժ անդամի առաջարկութեանը ընդունելով, կրկին դիմեց սրբազան առաջնորդին, խնդրելով որ նորին բարձր սրբաշնորհները միջնորդէ, Էջմիածնի Սինօզիկ, թնտալու համար ստանալ Ս. Աստուածամօր եկեղեցու արդիւնքից ոչ 600 ռուբլի այլ 1080 ռուբլի որ հարկաւորում էր երկու դասարանների պատանդութեան համար: Ինչպէս վերևում յիշեցրած պատմութեան համար, աղայաց և օրերորդաց դպրոցներում երրորդ դասարանները և բաւականին ընդարձակ, բայց բոլորովին առանձին պրօգրամայով, որը յարմարեցրած է անց դպրոցների ոչ մինչ երկու ստորին դասատուների պրօգրամային: Ուրեմն աւարտողները չեն կարողանում մտնել ոչ մի դասատուի գիմնադրային և կամ առաջին դասարան, առանց մի կամ երկու տարի պատրաստուելու նրա համար, նայուել աւարտողները դուրս կը գան բոլորովին անկարող մանուկ ուրիշ բարձր ուսումնարան: Աւելի լաւ էջր լինի արդեօք, որ հողաբարձութիւնը իր դպրոցների պրօգրաման յարմարեցնէր արական և օրերորդաց գիմնադրանքի երրորդ և կամ երկրորդ դասարանների պրօգրամային, այնպէս, որ իր ուսումնաւարտ աշակերտները և կամ աշակերտուհիները անարգել կարողանային ընդունուիլ այն ուսումնարանները, որովհետեւ չատ աշակերտներ կամ միջոց չունենալով պատրաստուիլ են համար, կամ մինչև պատրաստուիլ տարիքը անցկեցնելով մնում են և չեն հասնում իրանց նպատակին: Մենք չենք կարողանում աւելի ընդարձակ վել այս նկատողութեան կարեւորութեան վերաբերյալ օգուտը չէ կարելի հերքել, այլ կը կամենայինք մի հայեացք ձգել այդ դպրոցներում հայոց լեզուի դաստիարակութեան վերաբայց ցաւելով պէտք ասենք, որ չատ միջոց ուշադրութիւն է դարձնում հողաբարձութիւնը այդ նուերական աւարկայի դաստիարակութեան վրա իր դպրոցներում: Համարեն աստորախանցի հայ մանուկը դուրս է մնում իր մայրենի լեզուի կանոնաւոր և ժամանակակից դաստիարակութիւնից: Աստորախանի հայոց դպրոցների հողաբարձութիւնը լուռ է մնացել բազմութեան ձայնին, թէ անցել է Չամբասանների և Սարկիսեանների դարը, թէ մայր հարկաւոր է մեղ նոր գրականական լեզու, թէ մեղ հարկաւոր է կենդանի աշխարհաբանութեան կիսաչունչ գրաբանութեան: Այս ամենը չը նայելով որ գտել է արձագանք չատ հայ գիւղերի դպրոցներում: չը նայելով որ ամեն փոքր ի շատէ կրթված հայը զգացել է այդ ճշմարտութիւնը: Աստորախանի արական դպրոցի աշակերտները զեռ անգիր են անում Չամբասանի անթիւ մաշակայրեր իրանց անհամար օրինակներով, որոնց չիմանալու համար միշտ ստանում են յանդիմանութիւններ իրանց «վարձապետից» որ, իր դասատուութիւնով և իր զաղափարներով կը զարգարէ Նգիպատոսի հնութիւնների թանգարանը: Եւ զարմանալին այն է, որ մեր հողաբարձութիւնը լայնելով իր օգտութիւնը վեց տարուց աւել, այդ լեց տարակի ժամանակամիջոցում և «վարձապետի» 15 տարվայ ուսուցչութեան միջոցով Աստորախանի դպրոցների մէջ, չը համոզուեցաւ նորա աշակերտներն անօգուտ լինելու մէջ: Ամբողջ դասարանի մէջ 15 մարդ չը կայ որ հայերեն անսխալ գրել գիտենայ: Իսկ թէ գտնովին, նրանք չստ մեծի մասին այլ քաղաքներումն են ստորած կամ իրանց աշխատութիւնով: Մինչև անհամ ծխական դպրոցների կամ Աղաթախանի ուսումնարանի, որտեղ հայոց լեզուի դասատուն ի և նայն «վարձապետ» է, ուսումնաւարտ աշակերտները պարզ խոտովանելում են, որ նրանք այդքան չեն սովորել, և չատերը զգալով մայրենի լեզուի ներկայ ժամանակում անհրաժեշտութիւնը արատում են իրանց 6 տարվայ աշատուութիւնը, որ անց են կացրել Չամբասան քեականութիւնը անգիր սերտելով: Ամեն խնդիր

ուսուցիչ աշխատում է գրաւել իր աշակերտներին
ուէրը և ուշադրութիւնը դէպի այն առարկան, որ
նա աւանդում է. բայց մեր «վարժապետը» ընդ-
հակառակն աշակերտների մէջ յարուցանում է իր
վարմունքով հակակրօնութիւն և մինչև անգամ
ատելութիւն դէպի իր առարկան, հայոց լեզուն:
Այսպէս աշակերտը իր ուսման ընթացքը աւար-
տելոց յետոյ դարձեալ շատ վատ աչքով է նա-
սում իր մայրենի լեզուի վերա, ոչ այլ հայերէն
գիրք չէ կարդում և միշտ համոզված է լինում, որ
մինքն բայցի գրաբանից ուրիշ գրականական լեզու
չունենք, թէ մեր ամեն զրգաժները գրաբան են
և մինչև անգամ ներկայ լրագրական լեզուն գրա-
բան է երևում նրա աչքում, և այս պատճա-
ռով հեռի վաղում նրանից: Այստեղ ազգային
գործերին ձեռնասնուխ եղողները մինչև անգամ
գործին վերաբերելով գրութիւնները հայերէն է
գրում, այլ միշտ օտար լեզուով: Այս բանը հա-
տատարեալ համար պարտաւորված են դառնալ
դէպի մի մօտիկ անցեալ: Յանձնաժողովը ճիշդ
պատահելի անձերից բաղկացած, որ ընտրված
էին հայ հասարակութիւնից վերադննդութիւն գոր-
ծելու համար եկեղեցական հոգաբարձութեան
թէ անցեալ 1876 թիւ հաշի վրա և թէ առհա-
տարակ յայն հոգաբարձութեան մի տարվոյ գոր-
ծառութեան վրա, ներկայացնում է իր նկատու-
թիւնները ընդհանուր ժողովին ոչ թէ հայերէն,
իբրև ազգային գործ, այլ օտար լեզուով, որի
համար և չէին ստորագրել անդամներից երկուսը:
Պարոն Ա., յանձնաժողովի անդամ, իր գեղու-
յումը օտար լեզուով կարդալուց յետոյ, հա-
տարակութեան պատւաւոր անդամներից չա-
տերը յայտնում են իրանց անբաւականու-
թիւնը այս տեսակ նորաձեռնութեան վրա, և զա-
պալմով վիճարկութիւններից յետոյ անբաւա-
րան կերպով թողնում են ժողովը: Բայց պարոնը
զաշտպանում է իրան և կամենում է իրան առ-
բարացնել, ասելով թէ հասարակութիւնը ոչինչ
ուր չէ արել իրան հայերէնի մէջ կրթելու հա-
մար երբ որ ինքը որք էր մնացել: Բայց պա-
րոն Ա. հանդուցեալ Նիկողայոս Աղաբաբեանի
տակած փողով կառուցած ուսումնարանում ճ-
րար որդեկրթել եզել: Դա այնքան վատաճ էր
որ պաշտպանութեան մէջ, որ չէ ամաչել մինչեւ
նրգամ իր վեց ամեայ հայկաբան ավարտապետից
որ այն մասնաւի հորա առաջին էր նստած:
Երջացնելով մեր յօդուածը պարտականութիւն
ներ համարում ծխական դպրոցների հոգաբար-
ձութեան ուշադրութիւնը դարձնել մայրենի լե-
զուի կանխաւոր դասաւանդութեան վերա, որ
ուսով ենք, երբորդ դասարանների երեւալու հետ
ստանայ կանխաւոր ընթացք:

Պարոյր

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎ ԻՅ

Օգոստոսի 20-ին

Այնքալ յուրիս ամսից ոսկեալ մեծ քաղմութեամբ թէ ֆինհեից և թէ Բոստովի կողմից բերում են դէպի մեզ երկաթթուղու գնացքները վերջին ճակատամարտերի թիւրք գերիներէն և այստեղ մի քանի օր թողնելուց յետոյ ուղարկում են դէպի Նիսիսային մեծ քաղաքները՝ զետեղելով իւրեքանչիւր մեծ քաղաքում 500 կամ աւելի ևս հողի, Այս գերիներէն մէկ պատահում են ստէպ ստէպ և թիւրք զօրաց աստիճանաւորներ: Այստեղի բնակիչները մեծ հետաքրքրութեամբ են հանդիպում սոցա և ճանապարհ զբոս: Նոյն իսկ Խարկովի մէջ բնակելու համար՝ նշանակած է 500 հողի: Սոցանից շատերն քաղաքի մէջ ապտա զբոսնում են, ծախում են թիւրքաց ոսկեալ դրամները և գնում են իրանց համար հարկաւոր բաներ: Սոցն մէջ պատահում են և հարուստներ: Թիւրքի կարմիր ֆէսը երեւելուն պէս ճանապարհի վերա՝ վազում են ամեն կողմից տղայք, կանայք, մարդիկ, չըծապատում ևս են նայելով ճեռտուն են ամեն տեղ պատճառ որ այստեղի բնակչաց մեծ մասը դեռ չմինչև այժմ օսմանցի թիւրք չէին տեսած: Այլևս նաներից շատերը երբեմն անտանելի ճանճերի պէս կպչելով հասարակ թիւրք զինուորականներից (турокъ, турокъ) են կանչում և չը նայելով տեղիս պոլիցիայի շահերիցն՝ չէ աջողվում այս թիւրքերին երեսնանկից ապտա և հանդիստ պահել իրանց ճանապարհից՝ զնայու ժամանակս:

Ռեզիլիբ գերի վիճարկողներն ինքեանք շատ կեղ-
տու և պատռտած են, բայց պէտք է ասել՝ որ
ստ զո՛հ են իրանց վիճակից՝ պատճառ որ ու-
ստ տեղաթիւնը մեծ ծախսեր է անում սոցա-
մամբ և լաւ է պաշտով՝ վարձած են մաքուր
նակարաններ, ունեն կա՛ն, կարա՛ք, ուտում են

ոչխարի միւս, փլաւ և այլն իրանց սիրած կերակուրները: Բնակիչներինց շատերն էլ նրանց այցելելու ժամանակ ձխախոտ կամ այլ բան են ընծայում: Օրվան մեծ մասը զբօսնելով և երգելով են անցնում այստեղի գերինները: Իսկ ինչ որ կը վերաբերի թիւրք գերի զինուորական առտիճանաւորացի նորա առաւել լաւ քեֆեր են քաշում: Տները վարձած են քաղաքիս ամենալաւ մասերում, ունեն իրանց թիւրք ծառաներ, և ուռւաց տէրութիւնից ստանում են նշանակված գումար որով ապրում են փաշաների ոչխ և բաժակիւնապնում են իրանց ցանկութիւնները, Գրնում են թատրոններ, զբօսական պարտէզներ իրենիոններ, Կօնցէրաններ, Կառ.քերով չրքում են քաղաքիս ամեն կողմը և քեֆեր անելով ապրում են: Աստիճանաւորներից ոմանք խօսում են ֆրանսիերէն, իտալերէն կամ ղերմաներէն: Գրանի թէ ուռւաց գերիններն էլ այսպիսի ընդունելութիւն գտնէին օսմանակն, տէրութեան ղէջ:

Այստեղի հայերը վերջապէս մէկ զիպուածով
ունենալով մի քահանայ: Կւստատորիա քաղաքի
պատերազմական զրոյթեան պատճառով՝ բնա-
խիշեերի մեծ մասը՝ զաղթել են այնտեղից զա-
ւազան տեղեր՝ թողնելով իրանց անշարժ կալը
չարժական կայքի մեծ մասը: Այստեղի հայ
վեհեցոյն քահանան տէր Նչան Տէր-Նչանհանսը
սո՛ւ տեսնելով բոլոր իր ժողովրդի ցրուելն և գե-
րեհնալով Խարկովի սովակաւթիւն հայ բնակչաց
արտէ ցանկութիւնը՝ եկաւ զէպի մեզ, Խար-
ով քաղաքը, բնակվելու իր բնտանիքով: Տեղիւ
այեբր չաա սիրով ընդունեցին և ըստ կարո-
ւթեան կօդեն թէ պատւարածան միակ հայ
բնախայի և թէ պատերազմական զիպուածնե-
ւով վնաստած, և յետի խեղճութեան մէջ բն-
ւած մի գերդաստանի:

U. · U,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Միգ ինքզրու՞մ են յայտնել որ մի ընտանիքի
Հ Թեփեհիստիկ ընդունված են գելեդիկ
Հալիվանիքի, երկու կամ երեք հոգի, աղջիկ թէ
զաչ: Աթէ հարկատու լինի, յանձն են առնում
են իրենի տալ զաւարել, կամ պարտաւի հայե-
րնչ, ուստեղինչն եւ առարկանիքից: Հապէն
սրկիւ է իմանալ «Մշակի» խմբագրատան մէջ:

Սմառվայ անտանիկ չոր եղանակները ան-
վա և օգոստոսի վերջին օրերից սկսած թիֆ-
սցիք վայելում են գեղեցիկ, հով և անձրևային
անակ: Սմարանոց զնայած հասարակություն
մասը վերադառնում է՝ մեր քաղաք:

ՆՈՒՂԱԽԻՐԻՑ մեզ գրում են: «Շուկայէի ստանաբարնը շինված է մի նորակառոյց եկեղեցւո՛մ մօտ: Արտաքուստ ուսումնարանը բոլովին ուսումնարանի ոչ գիրք, ոչ էլ աւեր ունի, աւելի նման է մի հին գոմի, ուր անասուններ են պահւում: Ներսիցն էլ կարելի էր չհայնանայնել, եթէ չխտժեան մէջ չը նվէին դատական երկայն նստարանները, Այսպէս կարգում են մօտ 30 հողի երեսանքը՝ և սատուութիւն են անում երկու ուսուցիչներ, նոյնի իւրաքանչիւրը ստանում է ամսական բութի: Լաւ կը լինէր աւելացնում է մեր երկակիցը, եթէ կարձէին միայն մի ուսուցիչ 40 բութով, իսկ 20 բութը ամսական գործին ուսումնարանի պիտուքների վրա, վարք մի ծառայ որ ուսումնարանը մաքուր պահէ և զրատախտակը սև ներկով ներկել տալին: Սատան մէջ տիրում է սաստիկ անմաքրութիւն, և նստարանները մատնահափ թղթով են կլկված: Զարմանում ենք, աւելացնում է երկակիցը, որ թեմական վերատեսուչը Թիֆլիս այդպիսի մօտիկ գիւղում չէ կարողանում ուսումնարանի վրա:

ԻՖԼԻՍԻ փառաքայլին վարչությունը յայտ-	շա
է որ նորա ներկայությունը նշանակված է	նա
երգ, առանց կրկնաձուրդի, քառաքայլին գե-	ներ
ղերք հնդգ վիճակները վրա, թուրք գաղվում	մա
Ռիֆիւսի 11-որդ վիճակում, 2. բաժանման	փա
Աղբրեէվսկի փողոցում հետեւող սահմա-	երկ
նում հնարից կապիտան Եէլլովոյի տուն,	ցա
Ալբրից Աղբրեէվսկի փողոց, հարաւից կիրոջ	զկ
ս փողոց, արևմուտքից գնեերալ Մամանցկի	շալ
և կլիսալիսկովսկու Ու Պանցաձէի գետակ-	նէ
հետեւեալ պայմանաժամւորում՝ 1 և 2 վի-	յալ
ճակում որոշք առանձնապէս սահմանադրու-	Յեա
մ 91,55 և 155,7 քառակուսի պարսէր, սեպ-	և
ները 9-ին: 3 վիճակում 183 քառ. սաժ.	
տեւերը 23-ին: 4 վիճակում 182,9 քառ.	
սեպտեմբերի 30-ին և 5 վիճակում 183,82	
քառ. սեպտեմբերի 16-ին ներկայ 1877	
Վ. Ասմանի մասնակցողները պարտաւոր են	
պայցելել օրինաւոր դատականներ:	

ԲԱԳՈՒՅՑ մեզ գրում են որ շատ ցանկալի
կը լինէր որ «Մշակը» եթէ ոչ ամէն օր, գոնէ
շաբաթը չորս անգամ հրատարակէր: Մենք էլ
այդ բանը ցանկանում ենք, բայց ցանկութիւնը
իրագործելու համար հարկաւոր են միջոցներ,
ձեւարարութիւնն է որ ուրախալի է թէ «Մշակը» ամէն
տարի 600 հարւելի չափ կամաւոր բաժանորդ-
ներ և բազմաթիւ համալրողներ ու կարգա-
դողներ ունի,—բայց մինչև որ բաժանորդների
թիւը միշտ 600-ից չի անցնի և մեր լրագրի
միջանկյալ համարը տասն և հինգ մարդ կը
կարդան, փոխանակ զովկելու,—մենք երբէք չենք
կարողանայ «Մշակ» լրագրից ամենօրեայ թերթ
արձնել, Ուրիշ բան է եթէ մենք ինքներս կա-
մուծութիւն ստենալայինք, այն ժամանակ մենք
ստատիստիկներ երկու կհանդիպէինք մինչև որ
ստատիստիկները ընթերցանութեան հաշակը
ստենէր:

ՔԻՖԻԼԻՍԻ Խառնական օպերայի սեփօնը շու-
տով սկսվելու է: Օպերայի երգիչներին խումբը
երգեն հաստ մեր քաղաքը: Տեսնենք, այս տարի
նշ տեսակ օպերա կունենանք:

ՊԳԻԿԻՐԻՑ մեզ գրում են հետևեալը: «Այս-
ացինք ձեր լրագրի 60-որդ համարում, որ իբր
է Լիբան հասանդի զիւղական հայ ազգա-
նաւորութիւնը անմարդասէր կերպով է վարւում
իւրեքիայից նոր գաղթաց հայ ընտանիքների
հետ: Երբեք որ մեր կեանքում չստ ստա՛ն քանի
քը լսած, բայց այդպիսի պօչաւոր սուտ զեռ-
ւինքը լսած: Ո՞գէ է ձեզ այդ լուր հաղորդող պա-
նինք, բայց մենք փաստերով ցոյց կը տանք որ
եր գիւղական հայ հասարակութիւնը ոչ թէ
այն մի քանի կօպէիով օգնում է թշուառնե-
րին, այլ բազմաթիւ ընտանիքները նոր գաղթած-
րից մեր շինականները իրանց հացով իրանց
սուր պահում են: Փաղաքներում դանազան ան-
տանքը յորդորում են հասարակութիւնը բարե-
բոլորութիւն անել և պատճառ են լինում ցո-
ւտ թշուառների ստորագրութեան քաջգլուէն,
կ'մեր խեղճ հայ շինականները իրանց բնա-
ն բարեսրտութեամբ և հասպակեալական հիւ-
սակութեամբ ընդունում են իրանց տանը և
հաճում են թշուառացած հայ եղբայր: Ով որ
հաւատարմ մեր խօսքերին, թող շնորձ բեխ
որ գաւառում և իր սեփական աչքերով վերա-
նուէ՛ք մեր ասածը: Այս իօպէիս Մուրաւյու-
ւաւում 50 տունից աւելի նոր գաղթական
ներկից կան: Գոքա Բայազէտ քաղաքից և Ար-
տ, Մէշրամանայ, Քօրուն և Մուսուն հայ գիւ-
ղինք են: Գոքա խալառ կողպտոված են: Չը
տեմ, աչտեղ ինչո՞վ կապէին, եթէ մեր գա-
նացի հայ շինականները չէին օգնի նրանց:
տ'լաւ կը լինի որ այն անձը, որ ձեզ հաղոր-
է այդ սուտ լուրը, սովորի հշմարտութիւն
եղուն»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻԻՐՔԻԱ. ԵՒ ԱՆԳԼԻԱ.

անգլիական «Times» լրագրի մէջ տպփցու-
երուն մի նամակ Հեմֆրի Սանգվիլն տո-
րութեամբ, որ քննում է այդպէս ա-
նանկա՝ անգլիական ինտերնաների
իրը և խտուրթամբ պարտաւում է ան-
պիան թիւրքասէր քաղաքականութեան
ումը մի կողմից ամեն միջոցներով արդա-
նել թիւրքայի գործունէութեան եղա-
ւ և միւս կողմից ստուեր գցել եւրոպական
պետութիւնների վարմունքի վրա։ Վեռ-
հեռու չէ այն ժամանակը, ասում է
սկի հեղինակը, երբ Ֆրանսիան կասկած-
էր յարուցանում անգլիական ազգի մի
մէջ և մեղադրվում էր անչափ մեծ
ասիրութեան և թիւրքաց պետութեան
ններում անբաւականութիւններ յարու-
լու ձգտման համար, այնպէս որ ան-
լան հիւպատոսներին յանձնված էր ու-
թեամբ հետեւել Ֆրանսիայի գործու-
թեանը Սիրիայում և գեկուցու ֆեր տալ
մասին անգլիական կառավարութեանը։
պատահեցան սպանութիւններ Լիվանի
ամասկոսի մէջ։ Թիւրքաց կանոնաւոր
ի սորդանները (ինչպէս և բաշիբոզուկ-

ները) օֆիցիները և թիւրք ջնապարհները, որոնք խօսում են եւրոպական լեզուներով, կատարեցին Սիրիայում վայրենի գաղափարները, ներթափանցեցին բնակիչներին զանազան տանջանքներին, սպանեցին, կողոպտեցին նրանց։ Նրբոր թիւրքերը կատարում են այդ տեսակ յանցանքները, Անգլիայում ընդունված է մեղադրել ոչ թէ թիւրքերին, այլ մի որ և է երբորդ անձն, որ իր թէ զրդէ է թիւրքերին այդ տեսակ յանցանքներ կատարելու (այդ կատարում է, երեւի, համաձայն մեր հասկացողութեան անգլիական ինտերեսների մասին)։ Թիւրքերը մեր բարեկամներ և դաշնակիցներ են, պարզ է որ այդ տեսակ անցիւ քաղաքացիներ ունեն այնպիսի բնական բարոյական յատկութիւններ, որ չեն կարող կատարել այդ տեսակ գաղափարները ներ, ուրեմն մենք պէտք է մեղադրենք մի որ և է այլ, քրիստոնէական պետութիւնները մինչ 1860 թիւն մենք միջոց չունենալով ռուսներին մեղադրել, որովհետեւ կատարված սարսափելի անցքերը դուրս էին նրանց գործունէութեան շրջանից, այդ պատճառով մենք մեղադրեցինք Ֆրանսիացիներին, որոնք իր թէ զրդէցին քրիստոնէական մէջ բարեկամ թիւրքաց աշուղներին անգլիական մեղք թիւրքերին միջոցով։ Բայց այնու տոմարին մենք բացարձակապէս միայնակ Ֆրանսիացիներին հետ, որպէս զի պարտաւորեցինք թիւրքերին զինուորական անվտանգութիւնը (այն ժամանակ լորդ Բիլինգսլիքը և լորդ Կլեյրի չունէին իրանց ձեռքում կառավարութեան զէնք)։ Հասկանալի է որ անգլիական թիւրքացիները աղմուկ բարձրացրին, մարդասիրականով ընդհանուր կոտորածներ, ագահ Ֆրանսիայի անվերջանալի նուաճումներ, անմեղ մահացողները յուսահատութիւնը և այլն, — բայց լորդ Բոտել անխախտ մնաց իր քաղաքականութեան մէջ և թիւրքերին զայնցին։ Զարմանալի է ինչպէս թիւրքերը հեշտութեամբ պահանջներին զինուորական անուում, երբ որ նրանց չեն նախագործեցնում թէ զինուոր են ստիպողական միջոցներին։ Այնուհետեւ տառապալալ Սիրիային ապահովեցաւ աւելի բարեկարգված կառավարութիւն և այդպիսով, չը նայելով զանազան արգելքներին, փորձը աջողեցաւ։

Արդեօք, շարունակում է նամակագիրը, մենք կրկին կը կուենք Օսմանեան պետութեան ամբողջութեան համար, կամ կը բաւականանանք նորանով որ զանազան արգելքներ կը դնենք մեր հակառակորդի առջև։ Իրերի բնական ընթացքին հակառակ կը լինէր, եթէ բարբարոս խուժանը, որ իր սեփական երկիրը անդադար անարեւոյթի (անխելանութեան) մէջ է գցում, և որին զսպելու համար հարկաւոր է որ դրսի պետութիւնները միջամեն, անորոշ ժամանակով պահանջներ իր ամբողջութիւնը։ Իսկ ինչ որ վերաբերվում է նորա անկախութեանը, նոյն իսկ այն փաստը որ այդ անկախութիւնը պահպանվում է Անգլիայի ձեռքերով, ցոյց է տալիս որ կատարելապէս հակասում է անկախութեան գաղափարին։ Ճշմարիտ է, մեզ ակործնել չէ որ Ռուսաստանը նուաճումներ է անում, բայց ինչպէս կարող ենք մենք արգելք դնել նրան, երբ ինքներս, քանի մի սերունդներ շարունակ, նոյն քաղաքականութեան էինք հետևում։ Հնդկաստանում, և դեռ այդ վերջին տմիկներում միացրինք մեզ մի հարուստ նահանգ Աֆրիկայում, իր տարածութեամբ Ֆրանսիային հաւասար, որ բերական և եւրոպական ծագումի ազգաբնակչութեամբ։ Եթէ Ռուսաստանը մեր օրինակին է հետևում, ինչպէս կարող ենք մենք նրան մեղադրել։ Փոքրիկով Բոլթարիայի հարցը, շարունակում է «Times» լրագրի թղթակիցը, զիմենք հայտատանին։ Մենք կարող ենք որ հայտատանի ահաբեկ տարածութիւնները Վանի և Կոստանի կողմերում, որտեղ թշնամիները սոքը անգամ կոխած չէին, կատարելապէս շնչադրած են։ Այդ երկիրներում երեւի աւելի բազմաթիւ սպանութիւններ կատարվեցան, քան թէ Բոլթարիայում։ Սիրիայի գետերը կարող է, ի հարկէ, նրանց զենքը այդ գաղափարներին նշանակութիւնը և մինչև անգամ հաւատ ընծայել թիւրքաց ցուցումներին ռուսաց խօսութիւններին մասին, բայց զորանով նա իրան ցոյց է տալիս միայն թիւրքաց կուսակից, բոլորովին չը վճռելով ինչպիսի Բաղդադիայէս մենք այնպիսի գրութեան մէջ չենք որ անպայման հաւատաւոր զիպլոմատներին Թիւրքիայի մասին։ Հաւաքած են մեծ քանակութեամբ փաստեր և իրողութիւններ, որոնք ապացուցանում են որ Անգլիայի արեւմտի և փողով պաշտպանվում է անարխիա, որին, բառի նշանակութիւնը մեղմացնելու համար անուանում են թիւրքաց օտերութիւնը։ Այդ իրողութիւնները պարզ ցոյց են տալիս որքան անհիմն էր այն անհիմն էր անկողմնապահ զեկուցումներ կազմել և քննել փաստեր, և ոչ չեղած բաներ։ Հարկէ, այն հրէշաւոր առակի պէս, որ հազարգլիցաւ նախկին դեպքանից, որ իր թէ թիւրքերի հակառակ քրիստոնէականը յափշտակութեամբ էին գնում թիւրքաց ցրոշակների տակ պատերազմելու համար։ — Այն զարմանալի կարծիքը, որ Լայպպի յայտնել է որ իր թէ թիւրքերը երբէք զինած չեն մամուլի պաշտպանութեանը, նրա այն ձառի կրկնութիւն էր, որ նա խօսեց քանի մի տարի առաջ պարլամենտում մեր թէ և աւանդական պարսաւած քաղաքականութիւնը պաշտպանելու համար։ Այդ տեսակ համոզմունք մեզ անհիմն է երևում, որովհետեւ յայտնի է թէ Վիկտորիայի մամուլը երբ չորրորդականը հրէշական է, ուրեմն և թիւրքական է, Պէշտի մէջ բոլոր լրագիրները թիւրքաւոր են, Բերլինում նոյնպէս բաւական են մամուլի թիւրքաց պաշտպաններ, Փարիզում Բերլինից էլ աւելի, իսկ Լոնդոնում մի երկինք և երկու առաւօտեան լրագիրներ կան, որոնք յափշտակված թիւրքացիներ են, չը հաշտելով ուրիշ սովորական պետական օրգանները։ Առանց այլևայլութեան կարող եմ ասել որ ոչ մի օտար տէրութիւն այդքան օգուտ քաղած չէ եւրոպական մամուլի ծառայութիւնից, որքան Թիւրքիա և ի հարկէ նրանցից ոչ միւր այդքան շատ հարկաւորութիւն չունէր մամուլի պաշտպանութեան, որքան Թիւրքիան, որ խմբադրական յօդուածներին մէջ պաշտպանութիւն էր գտնում և արդարանում էր ասիական խուժանից գործված զվրէյ բարբարոսութիւնների մէջ։ Վերջապէս կուզենայինք մեր թիւրքացիներին պարզապէս խնդրել բացատրել իրանց քաղաքականութիւնը։ Արդեօք պարտաւոր ենք մենք պարբերական կրպով շարունակել Վրլմի պատերազմը, մենակ կամ դաշնակիցներով, իսկ ժամանակամիջոցներում ուշադրութիւն չը դարձնել այն յանցանքների վրա, որ գործում է թիւրքաց տէրութիւնը իր հպատակների դէմ, միայն այն պատճառով որ այդ հպատակները քրիստոնէական են։ Անտարակոյս ամեն մարդ, որի սրտում դեռ չէ հանգել խղճմանքի կայծը, կը սարսափի մտածելով որ Անգլիան, ազատ ազգերի այդ մայրը, կարող է իր շահերը աչքի առջև ունելով, դատապարտել ստորացնող սարկութեանը միլիոնաւոր էակներին։ Փոխանակ զբերթիւրքերին որքան կարելի է չուտ ծնել քրիստոնէականի ապստամբութիւնը, որոնք իրանց կրած ծնւան պատճառով յուսահատութեան վերջին ծայրն էին հասցրած, — ինչպէս և արեւելք մենք լորդ Կլեյրիի օգնութեամբ, — աւելի լաւ չէր լինի անկեղծ կերպով միանալ Ռուսաստանի և այլ պետութիւնների հետ, բարբարոս պետութեան կամայականութիւնը զսպելու և քրիստոնէականի սարկութեանց

հետգհտէ ազատելու համար։ Այն միտքը, իր թէ քրիստոնէականը չեն կամենում են թարկվել ռուսաց իշխանութեանը երկխոսական միտք է, որովհետեւ ամեն տեսակ տէրութիւն թիւրքիա հպատակ քրիստոնէականի համար աւելի լաւ կը լինի, քան թէ թիւրքաց տէրութիւնը։ Ամեն տեղ քրիստոնէականը պատահում էին ռուսաց զօրքին ուրախութեան արտասուքներով և զօրքից անցնող ծանապարհը ծաղիկներով էին ծածկում։ Մի թէ հարկաւոր է որոնել աւելի մեծ և կրչեռ ունեցող ապացոյցներ, Սուլթանի հպատակ ազգաբնակչութեան ամենաշխատասէր մասի զօգուհութիւնը արդարացիւր համար։

ՎԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Վանայ գաւառին մէջ բարբարոս քրդաց գործած սպառնալիցութեանց նկատմամբ սըրբազան պատրիարք հօր անցեալ շաբթու առ Բարձրագոյն Դուռն ուղղած դատն գանգատանաց վրայ, ներքին գործոց նախարարութիւնն հետաքրքրվեցաւ թիւն ինչպիսիք էր Վանայ կուսակալ Հասան փաշայէն։ Նորին վեմութիւնն երկար հետաքրքրվեցաւ մը ս. պատրիարքին գանգատներուն ստուգութիւնը հաստատելէ զատ, տեղւոյն հայ ժողովուրդան թըշուառ վիճակը նկարագրելով կը յայտնէ թէ մեծ մասը մերկ և բոկոս են, և թէ մէջերուն շատն ալ հացէ զուրկ անօթի մնալով վիճակի մէջ կը գտնուին, այնպէս որ յիշեալ ժողովուրդան թըշուառութեանն ու խեղճութեան հաւասարող ուրիշ ժողովուրդ մը չը կարծեր որ գանուի աշխարհիս երեւի վրա ուրիշ որ և է տեղ մը։

Բարեհիւր կուսակալն երկրին հայ ժողովուրդան այս ողբալի վիճակը նկարագրելէ ետեւ, առաջին առիւթը անմիջական պէտքն ու կարեւորութիւնը կը ձանաչէ, և կը յայտնէ թէ աւարառութեանց և սպանութեանց վախճան տալու և ներքին բարեկարգութիւնն ու հասարակաց անդորրութիւնն ապահովելու համար զինուորական զօրութիւն հարկաւոր է։ Ուստի և կառաջարկէ Բ. Կրան որ անյապաղ յիշեալ գաւառը զինուորական բաւական զօրութիւն մը զրկելու միջոցներ ձեռք առնուին։

Հասան փաշայի սոյն անկեղծ տեղեկագրին վրա պատերազմական գործոց նախարարն հետաքրքրեց Մուսուլի զօրաց հրամանատարին որ պէտք եղածին չափ զինուորական զօրութիւն պատրաստելով անյապաղ Վանայ գաւառը զրկէ կուսակալին տրամադրութեան ներքե զինուոր։

Այս որոշումն ու տնօրէնութիւնն հինգ շաբթի օրը վեմաւ։ Սալֆետ փաշային կողմանէ պատրիարքական փոխանորդ գերատէր-հօր հաղորդութեամբ պատրիարքարանէն ալ այս շաբթի օր յատկապէս հետաքրքրեալ շուրջաւ Վանայ փոխառաջնորդ երեմիա եպիսկոպոսին, որ Վանայ կուսակալին աջակցելով ն. վեմութեան հետ աշխատի տեղւոյն ժողովուրդեան վիճակը բարւոյնելու, բարեկեցութիւնն ապահովելու, և Բ. Կրան ըրած տնօրէնութեան անթերի գործադրութեան հոգ տանելու։

(Մատիւ)

ՄԻԿԱԿ-ՓԱՇԱՅԻ ԶԱՌԸ

Ֆրանսիական «Journal des Débats» լրագիրը հաղորդում է որ օգոստոսի 15-ին (27) Փարիզի պ օ զ ի տ ի վ ի ս տ ն ե Ր (Օգոստոսի 15-ին) գրանական դրական վարդապետութեան հետեղները) ներկայացան Միկապիա փաշային, որ յայտնեն նրան և Թիւրքիային իրանց համակրութիւնը։ Թիւրքաց նախկին մեծ-վեցեր պատմական Ֆրանսիայի պօղեմիկներին հետեւեալ ձառով։ «Ռուս-

թիւրքաց պատերազմը ծաղիւն պէս լուսաւորված եւրոպայի հեղեհակութիւն ունեցող ձայները բարձրացան որ դատապարտեն այն պետութիւնը որ ենթարկեցաւ յարձակմանը, այն ինչ նշանաւոր ձառակոյտներից ոչ մին մի խօսք չասեց, որով պարսաւէր այն պետութիւնը որ յարձակեցաւ։ Ձեռ լաւ յայտնի է որ եթէ Թիւրքիան դաւանէր քրիստոնէական կրօնը, գործերը բոլորովին այլ ընթացք կը ստանային։ Տխուր է խոստովանվել որ կրօնական զգացմունքը խաւարեցրեց միտքը և զրկեց արդարութեան զգացմունքից։ մինչև անգամ նոցա, որոնց խելքը պէտք է անմատչելի լինէր որ և է նախապաշարմունքին։ Ուրեմն ի՞նչ օգուտ է ընունում կրօնը, եթէ նա ընդունալ չէ ծնեցնել մարդու մէջ արդարութեան զգացմունքը։ Մի թէ մահմետական կրօնը, որին այդքան թերահաւատութեամբ են վերաբերվում, ճշմարիտ խորատուզկեցաւ անշարժութեան մէջ և թշնամի է ամեն առաջադիմութեան, ամեն բարոյական զարգացման։ Քանի մի ամիս արանից առաջ ես օգուտ քաղեցի իմ ստիպողական ներկայութիւնից եւրոպայում, որ այնքան Սպանիա եւ այնտեղ ամեն քայլի վրայ ես տեսայ զարմանալի քաղաքակրթութեան հետքերը, որ պատասխատեցաւ այն երկրի մէջ արարների ձեռքով։ Աւելորդ եմ համարում հարցնել ձեզ, արդեօք Սպանիան և քաղաքակրթութիւնը շահեցան զորանից, որ քրիստոնէութիւնը յափշտակեց այդ թերակղզին իսլամի ձեռքից։ Պատմութիւնը այդ հարցին վճռողական պատասխան է տալիս։ Այդքան ինքնակի չէ գնահատում այն գաղափարը հեռանքները, որոնց եւրոպական այլ երկիրները հասան թէ բարոյական և թէ նիւթական կողմից։ Ամենից բարձր եմ դատում եւ եւրոպական ազատամիտ հաստատութիւնները, որոնք գրաւական են առաջադիմութեան և ազգերի։ Բարբարոսութեան Ձեռ ջնդի եւ այստեղ որչափ սերտ կապ ունեն կամ անկախ են քրիստոնէութեանց այդ հաստատութիւնները։ Ես կարող եմ միայն մի բան ասել այն է, որ սահմանադրութիւնը Թիւրքիայում մոյնվեցաւ ու լինում էր զործակցութեամբ և նրանց հովանաւորութեամբ։ Անձինք որոնք մեղանում կրօն և բարոյականութիւն են սովորեցնում, վաւորեց է որ ներշնչված են այդ ոգով։ Եւրոպայում զարմացած կը լինէին, եթէ իրանց նկուզութիւն տային ռուսականի իսլամի ոգին արասիդների ժամանակ և կը համոզվին որ իսլամը հիմք դրեց արեւելքում ռուսականութեան և ազատութեան սկզբունքներին։ Այն թերահաւատութիւնը որ եւրոպական քրիստոնէաները կարող են դեռ ունենալ իսլամի վերաբերութեամբ և որ, եւ հաւատացած եմ, պէտք է անհետանայ, բոլորովին օտար է մեզ համար քրիստոնէութեան վերաբերութեամբ։ Մենք յարգում ենք նոցա կրօնի հիմնողին, և ես բոլորովին անկեղծ կերպով ձանաչում եմ նրա վարդապետութեան ահաբեկ ներգործութիւնը բարբ և վարքի մեղմացնելու վրա։ Իսկ ինչ վերաբերում է թիւրքաց քրիստոնէականներին, մենք զանկանում ենք տեսնել նրանց մէջ միմիայն մեր կրօնայիններին, օսմաններին, որոնք կը բաժանեն մեզ հետ իշխանները և պարտաւորութիւններ։ Բաժանված լինելով ծագումով և կրօնով, մենք կարող ենք և կամենում ենք միանալ հայրենիքի սիրոյ մէջ։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԻՐԵՐ

«Մատիւ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալը։ «Ի նպատակ պատերազմական ծախուց ընդհանուր հանդիսակրթութիւնը բարձրաւ համար կանանցարթութիւն մը հրատարակեցաւ, յորմէ կը տեսնուի թէ մալաքազաքիս և գա-

— Կարծում եմ որ Ռուսաստանի և ֆուտսա-
տանի մէջ հաստատովեցաւ համաձայնութիւնը

— «Մատիւ» լրագրի յուլիսի 10-ի համարի մէջ կարդում ենք հետեւեալը՝ «Ս. Պատրիարք հայրը շարժել օրը յատուկ հրաւերմամբ Մեծ-Եղարձայն երթալով, նորին բարձրութիւնն յանուն վեհաւ. Մատենանի գոհութիւն յայտներ է՝ հայոց ազգիկ մատուցած ծառայութիւններէն եւ առաջարկել է որ հայոց ազգէն կամեաւոր զինուորորդիւն մի կազմվի մայրաքաղաքին պահպանութեան եւ վեհաւ. Ստեփանին անձնապաշտօնեան գործածվելու: Այս առաջարկութիւնն, ինչպէս կը տեսնուի, Ստեփանին հայոց ազգին վրա ունեցած համարման եւ բարձր վստաստութեան ակնհերս պայցացը մ'է, որուն կը յուսանք թէ ազգն ալ ըստ արժանւոյն պիտի պատասխանէ:»

ՏԿՈՒԼՑ Դ. ԴԱՆԺԷԱՆԻ. 1—3

ՏԻԿԻՆ ԿՕՐԵԻ և ՍՄԱՆՈՒԶՈՐԵԱՆԻ տարրական դպրոցում ուսումն ավարտված է առաջիկայ սեպտեմբերի 1-ից, այդտեղ աշակերտները պատրաստվում են միջնակարգ ուսումնալսանքները մտնելու: Բացի սորանից ճաշից յետոյ լինում են այնտեղ և կրկնդասի դասեր, այլ և աւանդվում են ցանկացողների համար ֆրանսերեն և գերմաներեն լեզուներ: Աշակերտները ընդունվում են երկու սեռից: Դպրոցը գտնվում է Վլոյսնցովի Նաբրեժնայի վերա, տուն № 19, իսկ սեպտեմբերից նորն փողոցի վերա, տուն № 18.

3—3 (1)

6-21 (1)

բու ժական հիւանդանոցներէ

15-25

Թարգմանեցի աշխարհիկ քարքառով XII-րդ դարում մեր լուսավոր ճիզակներից մեկի պայքարն զԴՈՒ ՄԱՐԻՆՆԻ ընտրել և պատահալան տալիքները, առեւայցներով սոցա հետ և ՈՂՈՄՍԻԱՆՆՈՒ պատուական առարկաների թմարմանում լինելու։ Վերքը առելի հարստացնելու նպատակով վերջում կարողել և մի յաւերած եղով ընտրել առավաններէ, և նորա համուստ կենսապայծիւնը և այլ առածներ։ Վնեկ վերջում և մի բառարան կենդանիների և բոլորել անունները առելի բացայտալ կացոյցանելու համար։ Բայց որովհետ և նիսկական միջոցը ինձ չէ ներում և ի յոյ հանը զորան, վաճառորդ դիմելով պաշտելի խղզիլ բարեբեւ պանծանիկ ձեռնառնիւնանը, խնդրում եմ բաժանորդ ցրուիլ իւրաքանչիւր օրինակի համար առ այժմ վճարելով 70 կոպէկ — շաղկէ։

ԶՋԻՔ: ԳՐԳՐՈՐԵՆՆԵՅԻ զգալաճանախոցով
 ևճաճաճով Է պ. Ն. Տէր. Կոնդուխտի (Սա-
 ենի լեզուով) Գ. Խ. Գ. տարին (միայն): Գլխ.
 Զառով անտոնյանի ճամբար 70 Գ. Կառնի
 Կոնդուխտի ճամբար 85 Գ. Կառնի Կոնդուխտի
 Կոնդուխտի ճամբար 60 Գ. (Սալթիկովի լեզուով) Խ.
 Բ. տարինը՝ այն օրերն պատասխան կը լի-
 են նոր տպագրություններ: Փաստ է, թե ինչ
 են նա միայն Զ. Կիրիլոսովի լեզուով ճա-
 նախոցով: 1-3

ԱՇԽԱՏԱՐԱՐ Հայոց կենդանի լե-
զուի ԳԱՍԵՐ Լ. ԽՍՍԱԿՅՈՒԹԻՆՆԵՐԻ:
Հարցնել «ՄՇԱ» լրագրի խմբագրա-
տանը: 1-10

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5.		Տ Ե Ղ Ե Կ Ա Յ Ո Յ Ց		Ք Ի Ֆ Լ Ի Ս . 1877.	
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Սկզբնական 5-ին)		ՀԵՌԱՎԻՐ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ	
Բ.	Կ.	Բ.	Կ.	ՓՈՍՏ	
Ոսկին (սղառմաներով)	7 90	Կովկասի և Ան-		1) Ամեն տեսակ թէ նա-	գուշի տրակտից՝ երեք-
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1225	դրակայանի քա-		մաների, թէ լրագրերի՝	չարեւի և շաքաթ օրերը:
Հին 20 կ. 72 պր. 1000 մ.	1090	ղաքների	1	Ռոսիայի տեսան և ար-	Ներսեսի տրակտից՝ եր-
Վերջինի 50% առաջի փո-		Ռուսաստան	2	տասանաման ուղարկե-	կուշաբլի, հինգշաբլի և
խառնութեան տոմ. 100 մ.	209	Աստորիա	3	լու, ընդունվում են ամեն	շաքաթ: Փոթի-թիֆլի-
Ներքոյի 50% վերջինի 50	209	Անգլիա	4	թու և անասուն 8 ժամից	լիսեսան երկրորդուրը
Մարտիկուր 208 ֆ.	100	Գերմանիա	2 88	մինչև 12 (բացի կիրակի	ամեն օր: Նույն տրակ-
Լոնդոնի կուրսը Ողեսայի		Ֆրանսիա	3 75	օրերից)	տից՝ չորեքշաբլի և կի-
վրա	9 48			2) Բազուի ճանապարհը՝	րակի Բեկի կլիկի տը-
Վենայի կուրսը ամէ 136 դ.	100			թիֆլիսից 9, 21	րակտից՝ երեքշաբլի և շա-
Գարեթի բարաթը	5	ԱՆԿԻՆՈՎ ԿԱՍԵԱՆ ՄԱՆ-		11, 58	քաթ:
Առաքական ըստիկ ակ-		ԿԱՐԱՐԱՅԱԿԱՆ ԳՈՐՈՑ		1, 29	
ցիան 200 մ.	260	(Վէրայի վրա № 38)		6, 47	
Փոթի թիֆլիսեան երկա-	125			9, 40	
թուղու ակցիան 125 մ.					
Շաքարը բրոցիկու	8	Ծննդականների ընդուն-			
» միս տեսակը	7 90	նելում իւրեք ցերեկվայ			
» շաքարաղը	7	և քիչըրկայ ամեն ժամա-			
» տրանդուր	7 20	նակ օրը 50 կոպեկ վար-			
» մաքուր վաճար	12	ձով, իսկ չքառորդներն ան-			
Բամբակը երկաթու Ա-		վաճ, Առանձին սենեակ-			
մերիկայի սերմից	7 20	ներում ամիսը 30 — 50			
Միս տեսակը հին սերմից .	6 50	րուբլ: Կանանց հիւ-			
Բուրգը թուլի	5 80	ւան զուրկ իւրեք ցերե-			
» թարաքամի	3	քաժամանակի մէջ վաճար			
Ալիւրը Երաքալու	1 30	ընդհանուր սենեակում 18			
» Նորանի	1 20	րուբլ, իսկ մասնաւոր սե-			
Գարին	1	նեակներում 30 րուբլ ամ-			
Մոմը բնասարկի (creap.)	12	սակաւս:			
Մետաղա Նուկայա	125	Երթեկի հիւանդ կա-			
Կախեթուր	55	նանց և երկանաների ըն-			
Կոկոնը Նուկայա (բոժ) . .	24	դուաների իւրեք մսին օր,			
Ֆերիզան (շաք) Աղու-		բացի կիրակի օրերից, 912			
լեայ	55	մինչև 11 ժամ առաւօ-			
Կոֆէն մոթի	27	տեան: Բժշկապետ Անա-			
» լիվանի	22	նով			
» մարտիկայից	18				